

ծատէին. եւ ոմանք հրացեալ երկաթով շան-
թէին. եւ այն կսկծուն վազէին վեր. իսկ այլոց
ձեռք անկեալ ոչ երկնչէին (էշք). եւ յսլովք
25 թողին զնոսա վասն յուլութեան. եւ այլք կէս
զինն տվին. զի այս աւելի հրաշք էր քան Ղայ-
սարու ներկած իշվանն:

Կայր ի Մսրբ մեծ մղկիթ մի եւ բարձր
մինարայ, Եաշիլ մէջիթ կոչէին, որ էր դե-
30 ղեցիկ եւ վիմաչէն. եւ մերձ նմին կայր Իմա-
րաթ, յորս հիւանդք եւ ախտաժէտք կային.
եւ ի դուրս ով կամէր՝ տային դեղբանք ազգի
ազգի՝ աչաց, ալուի եւ դլխացաւի եւ այլոցն,
առանց դրամի: Եւ կայր մօյտան մի այլ մեծ՝
35 քաղքէն դուրս, որ եզինք, կովք եւ ոչխարք
ծախէին. բայց եզն մեծ էր քան զզօմէշ. եւ
ոչխարն քան զէշ: Այլ եւ տեսաք վեց եղջերաւ
եւ չորս (եղջերաւ) ոչխարք. փառք Աստուծոյ:

ԷՍԿԻ ՄՍՐԲ

Օր մի այլ տարաւ զմեզ խոճայ Իսլրահիմ-
40 շան ի Էսկի Մսրբ. որ մեծ եւ լայնանխտ էր
եւ հին տներ դեռ եւս կային. բայց անմարդա-
բնակ էր: Կային եկեղեցիք մեծամեծք հոռմի,
խրտու. եւ մտեալ յեկեղեցիսն շրջեցաք: Այլ
եւ ցուցին մեզ բազում մարմինք ճգնաւորաց,
45 անապատաւորաց ի մէջ սընտկաց, որ երկր-
պազեալ աղօթեցաք: Եւ էին եկեղեցիքն քարէ
եւ փայտից: Եւ անտի երեւէր Եօթն մարանքն
որ է Շրիխլիր Յովսէփի գեղեցկին, մեծամեծք